Եվրոպական Միության և Եվրոպայի խորհրդի **Գործընկերություն հանուն լավ կառավարման**

Արդարադատության ամրապնդում
Տնտեսական հանցագործությունների դեմ պայքար
Հավասարության ապահովում և խտրականության դեմ պայքար
Կանանց համար արդարադատության հասանելիության խթանում և կանանց նկատմամբ բռնության դեմ պայքար

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Եվրոպական միություն

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Համաֆինանսավորվում և իրականացվում է Եվրոպայի խորհրդի կողմից

Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը Արևելյան գործընկերության երկրների հետ միասին* աշխատում են՝ խթանելու կառավարման, իրավունքի գերակայության ընդանուր արժեքները և բարելավելու քաղաքացիների կյանքը: 2014 թվականին նրանք մեկնարկեցին համատեղ նախաձեռնություն «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագիրը Արևելյան գործընկերության երկրների համար՝ աջակցելու Արևելյան գործընկերության երկրների ներքին բարեփոխումներին՝ արդարադատության ամրապնդման, տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի, հավասարության ապահովման և խտրականության դեմ պայքարի, կանանց համար արդարադատության հասանելիության խթանման և կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի՝ եվրոպական չափանիշներին համապատասխան: Ծրագիրը մշակվել է Եվրոպական միության և ազգային շահակիցների հետ սերտ խորհրդակցությունների արդյունքում՝ Եվրոպայի խորհրդի Գործողությունների ծրագրերին և Արևելյան գործընկերության տարածաշրջանի համար Եվրոպական միության առաջնահերթություններին համահունչ: Ծրագրի ընթացիկ փուլը, որը տևում է 2023-ից մինչև 2027 թվականը, հիմնված է նախորդ փուլերի՝ 2015-2018 և 2019-2022 թվականների ընթացքում ձեռք բերված արդյունքների և առաջընթացի վրա: ԵՄ անդամակցության օրակարգում ուշադրության կենտրոնում են Վրաստանը, Մոլդովայի Հանրապետությունը և Ուկրաինան: «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագիրը կշարունակի աջակցել Հայաստանին և Ադրբեջանին: Նաև նախատեսվում է անհրաժեշտության դեպքում աջակցել Բելառուսի դեմոկրատական ուժերի և քաղաքացիական հասարակության հետ համագործակցությանը:

ՆԱԽՈՐԴ ՓՈՒԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՒՄ ԵՆ՝

- Կարևորագույն դատաիրավական բարեփոխումների առաջանցիկ իրականացում, դատական համակարգի անկախության, արդյունավետության և արդյունավորության ամրապնդում:
- Օրենսդրության հետագա ներդաշնակեցում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հետ և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման բարելավում:
- Արդարադատության մատչելիության բարելավում հատկապես կանանց, երեխաների և առավել խոցելի խմբերի համար:
- Փաստաբանների ասոցիացիաների միջև համագործակցության ամրապնդում՝ բարելավելով նրանց գործունեությունը և զարգացնելով անկախությունը՝ քաղաքացիների ավելի լավ իրավական պաշտպանությունն ապահովելու համար:

Քաղաքականությունների, կառույցների և գործելակերպի հետագա համապատասխանեցում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկային, Վենետիկի հանձնաժողովի կարծիքներին և Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի չափանիշներին:

- Կոռուպցիայի, փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և շահառու երկրներում ակտիվների վերականգնման դեմ ուղղված քաղաքականության և օրենսդրության ուժեղացում:
- Հակակոռուպցիոն և փողերի լվացման դեմ պայքարի հատուկ մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների ուժեղացում՝ կոռուպցիայի, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի և կանխարգելման Եվրոպայի խորհրդի հանձնարարականները և եվրոպական չափանիշները կյանքի կոչելու համար:
- Ուժեղացված տարածաշրջանային համագործակցություն՝ կոռուպցիայի, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի և կանխարգելման հարցերում ներպետական խնդիրների և տարածաշրջանային մարտահրավերների հաղթահարման համար:

Փողերի լվացման դեմ պայքարի և ահաբեկչության ֆինանսավորման միջոցառումների գնահատման փորձագետների հանձնախմբի (MONEYVAL) և Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (GRECO) գնահատականներում նշված թերությունների հաղթահարում:

- Խտրականության դեմ պայքարի քաղաքականության և օրենսդրության ավելի սերտ համապատասխանեցում եվրոպական չափանիշներին:
- Շահառու երկրներում իրավահավասարություն ապահովող մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացում՝ օգնելու խոցելի խմբերին պատկանող անձանց խտրականության վերաբերյալ բողոքներին հետամուտ լինելուն համապատասխան կարգավորման մեխանիզմների միջոցով:
- Շահառու երկրներում խտրականության, ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տվյալների հավաքագրման բարելավված համակարգեր:
- Կանանց և բռնության ենթարկված կանանց համար արդարադատության հասանելիության խթանում՝ համաձայն Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիայիի (Ստամբուլի կոնվենցիա), դրանով իսկ նպաստելով Ստամբուլի կոնվենցիայի ստորագրմանը/վավերացմանը:
- Քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավվածություն և կարողությունների զարգացում՝ խտրականության դեմ պայքարի և կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման գործիքների մշակման հարցում:

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ Եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ) հանձնարարականների, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների շրջանակային կոնվենցիայի (ԱՓՇԿ) և Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի (ՏՓԼԵԿ) մոնիտորինգի արդյունքում տրված հանձնարարականների իրականացում և գենդերային հավասարության և կանանց իրավունքներին առնչվող Եվրոպայի խորհրդի չափանիշների իրականացում, ներառյալ Ստամբուլի կոնվենցիան, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան:

Շահառու երկրներին ուղղորդում է տրվել «Արագ արձագանքման մեխանիզմի» միջոցով գերակա բարեփոխումների հետ կապված օրենսդրության և քաղաքականության մշակման վերաբերյալ՝ արձագանքելու Վենետիկի հանձնաժողովի իրավասության ոլորտներում մասնակից պետությունների հետ սերտ համագործակցությամբ Եվրոպական հանձնաժողովի օրենսդրական վերլուծության առաջարկություններին, այդ թվում՝ ընտրությունների ոլորտը կարգավորող օրենսդրության (Հայաստան, Վրաստան և Մոլդովա), սահմանադրական փոփոխությունների (Հայաստան, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն, Ուկրաինա), կուսակցությունների մասին օրենքի (Հայաստան), խորհրդարանում օրինաստեղծ ընթացակարգերի սահմանադրական վերանայման (Մոլդովայի Հանրապետություն), ինչպես նաև մեդիայի ոլորտում (Տեսալսողական մեդիա ծառայությունների օրենսգրքի փոփոխություն՝ Մոլդովայի Հանրապետություն) և ԵՆ մեդիա դեպարտամենտի կողմից հրապարակված զանգվածային լրատվության մասին օրենքում (Հայաստան) փոփոխությունների վերաբերյալ իրավական փորձաքննության:

ԻՆՉԻՆ Է ՆՊԱՏԱԿԱՈՒՂՎԱԾ ԾՐԱԳԻՐԸ

- Արդարադատության բարեփոխումների ոլորտում տվյալների հավաքագրման և վերլուծության բարելավված մեխանիզմների միջոցով զարգացնել փաստերի վրա հիմնված քաղաքականության մշակումը:
- Ամրապնդել իրավունքի գերակայությունը, մարդու իրավունքները, գենդերային հավասարությունը և հակակոռուպցիոն մեխանիզմները և առաջ տանել դատաիրավական հիմնական բարեփոխումների իրականացումը:
- Իր գործողություններով նպաստել քաղաքացիների կյանքի էական բարելավմանը:

ԻՆՉՊԵՍ Է ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՆԵԼՈՒ ԴՐԱՆ

- Հարմարեցված և պահանջարկի վրա հիմնված աջակցության միջոցով, որը տրամադրվում է իրավական և քաղաքական շրջանակների հետագա բարելավման և ինստիտուցիոնալ կարողությունների ստեղծման համար՝ համապատասխանեցնելու Արևելյան գործընկերության երկրների ազգային օրենսդրության և պրակտիկայի եվրոպական չափանիշներին:
- Այդ նպատակով ծրագրի գործողությունները ներառում են տեխնիկական աջակցություն և փորձաքննություն, իրավական փորձաքննություն, ոլորտային գնահատումներ, իրազեկման բարձրացում և կարողությունների զարգացում բոլոր չորս թեմատիկ ոլորտներում:
- Ծրագրի երրորդ փուլում շեշտը դրվում է կայունության և շահառու հաստատությունների հանձնառության վրա:
- Գենդերային ինտեգրման մոտեցումը ծրագրի առանցքային տարրն է և այն ավելի է ամրապնդվում «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի միջոցառումների շրջանակներում:
- Տարածաշրջանային միջամտությունները հարթակ են ստեղծում լավ փորձի փոխանակման համար՝ ընդհանուր մարտահրավերները հաղթահարելու, ցանցերի ստեղծումը դյուրացնելու և տարածաշրջանային համագործակցությունն ամրապնդելու համար:
- Ծրագիրը կշարունակի հիմնվել երկրորդ փուլի շրջանակներում կիրառվող լավ գործելակերպի տարբեր սկզբունքների վրա, այդ թվում՝ ճկունության, որն առանցքային էր ի հայտ եկած կարիքները լուծելու և բազմաթիվ մարտահրավերներին հարմարվելու համար, խթանելով ծրագրերի ներքո մասնակցային և բազմաշահակից մոտեցումը:

ՆՊԱՍՏՈՒՄ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ

«Գործընկերություն հանուն լավ կառավարման» ձևաչափի և դրա ծրագրերի իրականացման միջոցով Եվրոպայի խորհուրդը օժանդակում է ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգին՝ աջակցելով Միավորված ազգերի կազմակերպության Կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ), մասնավորապես ԿԶՆ 5-ին՝ հասնելու գենդերային հավասարության և իրավազորելու բոլոր կանանց և աղջիկներին, ԿԶՆ 10-ին՝ նվազեցնելու անհավասարությունը երկրների ներսում և դրանց միջև և ԿԶՆ 16-ին՝ նպաստելու խաղաղ և ներառական հասարակություններին կայուն զարգացման համար, ապահովելու արդարադատության հասանելիությունը բոլորի համար և ստեղծելու արդյունավետ հաշվետու և ներառական կառույցներ բոլոր մակարդակներում:

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄՈՒՆ ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԿ ՀԱՅԱՑՔՈՎ

Արևելյան գործընկերության տարածաշրջանում իրականացվում են 17 երկրների համար նախատեսված հատուկ ծրագրեր և չորս տարածաշրջանային ծրագիր:

Գործընկերություն հանուն լավ կառավարման նախաձեռնությունն ընդգրկում է հետևյալ թեմատիկ ոլորտները.

- արդարության ամրապնդում
- տնտեսական հանցագործությունների դեմ պայքար
- հավասարության ապահովում և խտրականության դեմ պայքար
- կանանց համար արդարադատության հասանելիության խթանում և կանանց նկատմամբ բռնության դեմ պայքար

Նախաձեռնությանը հատկացված բյուջեն կազմում է 19,3 մլն եվրո (15 միլիոն եվրո տրամադրել է Եվրոպական միությունը և 4,3 միլիոն եվրո՝ Եվրոպայի խորհուրդը):

«Գործընկերություն հանուն լավ կառավարման» նախաձեռնությունը հետամուտ է երկշերտ մոտեցման՝

- Եվրոպական չափանիշներին համապատասխանության բարելավմանն ուղղված տեխնիկական աջակցության տրամադրում: Յուրաքանչյուր անգամ, երբ ազգային միջոցառումները համարվում են գործնականում արդյունավետ, դրանք ներառվում են տարածաշրջանային (բոլոր շահառու պետություններն ընդգրկող) կամ բազմապետական (որոշ շահառու պետություններն ընդգրկող) ծրագրերում:
- Արագ արձագանքման մեխանիզմ՝ գործիք, որի միջոցով Եվրոպայի խորհուրդը տրամադրում է ad-hoc (հատուկ) իրավաբանական և քաղաքականության շուրջ խորհրդատվություն՝ արձագանքելով շահառու պետությունների կողմից ներկայացված աջակցության դիմումներին: Այդ դիմումները կարող են վերաբերել ծրագրի չորս թեմատիկ ոլորտներից մեկին, սակայն կարող են նաև անդրադառնալ Վենետիկի հանձնաժողովի իրավասության տակ գտնվող այլ հարցերին և Եվրոպայի խորհրդի այլ մարմինների ծրագրերում ընդգրկված ոլորտներին:

«Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագիրը 2023-ից մինչև 2027 թվականը տևող տարածաշրջանային ծրագիր է, որը միտված է ազգային օրենսդրության և պրակտիկայի համապատասխանեցմանը եվրոպական չափանիշներին՝ հաշվի առնելով Արևելյան գործընկերության երկրների անհատական կարիքները:

Ընդհանուր ծրագրի ներքո տարբեր ծրագրեր են իրականացվում Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում և Ուկրաինայում: Շահառու երկրներին աջակցություն է տրամադրվում տեխնիկական համագործակցության միջոցով՝ իրականացնելու ներքին բարեփոխումները Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի 2014 թվականի մտադրությունների հայտարարության մեջ սահմանված ռազմավարական նպատակներին համապատասխան:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործընկերություն հանուն լավ կառավարման ծրագրի համակարգող թիմ
Ծրագրերի համակարգման տնօրինություն
Եվրոպայի խորհուրդ
Avenue de l'Europe, F-67075 Strasbourg Cedex, France

Էլ-փոստ՝ dpc_pgg@coe.int
Կայքէջ՝ http://partnership-governance-eu.coe.int/

PREMS 066424 – Photos : Shutterstock

ARM

Եվրոպական միության անդամ պետությունները որոշում են կայացրել միավորել իրենց գիտելիքները, ռեսուրսները և ճակատագրերը: Անդամ պետությունները միասին կառուցել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման տարածաշրջան՝ պահպանելով մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունը և անհատի ազատությունները: Եվրոպական միությունը պատրաստակամ է կիսվել իր ձեռքբերումներով և արժեքներով իր սահմաններից դուրս գտնվող երկրների և ժողովուրդների հետ:

www.europa.eu

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 46 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագիր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

www.coe.int

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Եվրոպական միություն

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Համաֆինանսավորվում և իրականացվում է Եվրոպայի խորհրդի կողմից